

Հարգելի <<Ռետո>> ապահովագրական ընկերության աշխատակազմ,

Գր. Նարեկացու անվան 137 հիմնական դպրոցի տնօրինության և աշխատակազմի անունից շնորհակալություն ենք հայտնում Ձեզ բարեխիղճ աշխատանքի, բարեհամբույր և սրտացավ վերաբերմունքի համար: Որպես հաճախորդ՝ Ձեզնից առանձնահատուկ շնորհակալություն են հայտնում դպրոցի փոխտնօրեն Անահիտ Ենգիբարյանը, ռուսաց լեզվի ուսուցչուհի Իրինա Սարգսյանը, դասվար Արմինե Պարոնյանը, հաշվապահ Սվետլանա Եգորյանը: Առանձնահատուկ շնորհակալություն է հայտնում Անահիտ Ենգիբարյանը մինչվիրահատական և հետվիրահատական բոլոր ծախսերը անվերապահորեն փոխհատուցելու համար, վիրահատությունը կատարվել է <<Շենգավիթ>> բժշկական կենտրոնում դոցենտ Արտյոմ Վյաչեսլավի Ստեփանյանի կողմից: Մենք սիրով կշարունակենք համագործակցել նման պատասխանատու և անձնվիրաբար աշխատող կազմակերպության հետ:

Հ.Գ. Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում <<Ռետո>> ապահովագրական ընկերության ներկայացուցիչ Ռուդիկ Հակոբյանին մեր աշխատակազմի հետ համբերատար և սիրով աշխատելու համար:

Հարգանքներով՝ 137 դպրոցի աշխատակազմ: